Համադրելով գեղարվեստական և պատմական տեքստերը՝ մեկնաբանի՛ր, թե ինչու տարբեր ժամանակներում գործող անհատների առաջ քաշած լուսավոր գաղափարները կյանքի չկոչվեցին:

Գեղարվեստական հատված՝ Մուրացան «Առաքյալը»

....Ներքին հարկի մի ցածուն, բայց և ընդարձակ սենյակի մեջ ժողովված էին մի խումբ աշխույժ երիտասարդներ:Նրանք ուսանողության ամենաընտիր մասը, կամ բանաստեղծորեն ասած՝ ծաղիկներն էին, որոնք իրենց կոչման նշանակությունն ըմբռնելով, ժողովվել էին այնտեղ՝ լավագույն մի գործով զբաղվելու համար.... Այսօր քննվում էր այն կարևոր հարցը, թե՝ նրանցից որը ինչպես պիտի գործե կյանքի ասպարեզը մտնելուց հետո....

-Մենք որդիք ու անդամներ ենք այնպիսի մի ազգի, որ ունի կարիքներ ու ցավեր: Այդ ազգն իրավունքով սպասում է մեզ, յուր հարազատ որդիներին, որովհետև գիտե, որ մենք բարձր ուսում ու կրթություն ստանալով, ձեռք ենք բերում այն ուժը, որով պիտի կարենանք յուր կարիքները լցնել և ցավերը դարմանել: Հետևապես, մեզ վրա դրվում է սրբազան պարտք՝ ի դերև չհանել սպասող ազգի հույսն ու ակնկալությունը....

Այս եղանակով դեռ երկար խոսեց նախագահը, ապա սկսան ամեն կողմից հանդիսավոր խոստումներ անել այն մասին թե՝ արդարև, կյանքի մեջ մտնելուց հետո պիտի նվիրվին հասարակաց շահին: Բայց բոլոր խոսողների մեջ ավելի դրական և կշիռ ունեցող խոստումն արավ Պետրոս Կամսարյանը, որ մի բարեկազմ և գեղեցիկ արտաքինով երիտասարդ էր:

Ուսանողներն ապշեցան, երբ Կամսարյանը հանդիսաբար հայտնեց, թե որոշել է քննություններից հետո վերադառնալ հայրենիք և իրեն նվիրել յուր ազգակիցների ամենից ավելի օգնության կարոտ դասակարգին, այսինքն՝ մտնել գյուղը և այնտեղ հիմնել օգնության մեծ գործ, հատկացնելով այդ նպատակին՝ յուր հարուստ հորից իրեն հասանելիք ժառանգությունը....

-Ամառանոցում զվարճանալուց առաջ ես պարտք ունիմ կատարելու, մայրի՛կ: ...Կան աշխարհում մարդիկ, որոնք շատ անհրաժեշտ բաներից են զրկված. ա՛յ, ես գնում եմ նրանց մոտ, որպեսզի կարողանամ նրանց մի փոքր մխիթարել, կամ նրանց կարիքներից մինը կամ երկուսը լցնել:

....Արևը մի չվան բարձրացել էր Մարալինջից, երբ Կամսարյանն յուր սրտագին շնորհակալությունը հայտնելով տանուտերին և նրա կնոջը, ողջունեց նրանց վերջին անգամ և բարձրացավ սայլակը: Տոնականը մի զորավոր բացականչությամբ խրախուսեց ձիերին և նրանք աշխույժով սլացան դեպի խճուղին:

Պետրոսի գալով Կամսարյանների վիլլան նոր փայլ ու շուք ստացավ:
— Իսկ Չիբուխլո՞ւն... Սևա՞նը...
— Նրանք դարձյալ մնացին իրենց տեղն անշարժ, անփոփոխ, ինչպես հարազատ մասունք անփոփոխելի հավիտենականության...

Պատմական հատված՝ Մադրասի ազատագրական խմբակ

Հայկական պետականության վերականգնման նպատակով 1770-ականներին Հնդկաստանի Մադրաս քաղաքում գործունեություն ծավալեց Շահամիր Շահամիրյանի գլխավորած խմբակը, որը հայտնի է «Մադրասի խմբակ» անունով: Դրա անդամերն էին Շահամիրյանի երկու որդիները՝ Հակոբն ու Եղիազարը, Մովսես Բաղրամյանը և այլք: Հետագայում խմբակին միացավ նաև Հովսեփ Էմինը:

Խմբակի նախաձեռնությամբ մշակվեցին և հրատարակվեցին Հայաստանի ազատագրությանը և հասարակական կյանքին վերաբերող ծրագրային երկեր, որոնցից հատկապես հիշատակելի են «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ»ը և «Որոգայթ փառաց»ը: Հիշյալ երկերը լուսավորական գաղափարներն արծարծող ստեղծագործություններ էին և մեծ նշանակություն էին տալիս ժողովրդին կրթելու և դաստիարակելու գործին: Մովսես Բաղրամյանի հեղինակած «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ»-ն առաջին տպագիր քաղաքական-հրապարակախոսական գիրքն է հայ իրականության մեջ: Գրքի նպատակն էր հայության մեջ հավատ և վստահություն սերմանել սեփական ուժերի նկատմամբ և ոգեշնչել մատաղ սերնդին՝ ձեռնամուխ լինելու հայրենիքի ազատագրման պայքարին: Հեղինակն իր հայրենակիցներին կոչ էր անում ուսում և կրթություն ստանալ, գիտելիքներ ձեռք բերել, քանի որ այդպես միայն հնարավոր կլիներ հաղթահարել անմիաբանությունն ու ներքին հակամարտությունը: Գրքում նաև քննադատվում էին միապետական կարգերը, և դրանց փոխարեն առաջարկվում էր սահմանադրական կարգեր ստեղծել: Մադրասի խմբակի հրատարակություններից թերևս առավել կարևոր է «Որոգայթ փառացը», որն ապագա հայկական պետության կառավարման սկզբունքների ամբողջությունն էր՝ սահմանադրությունը:

Երկու գրքերի միջով էլ կարմիր թելի պես անցնում էր հայերի կրկնակի ազատագրման տեսլականը: Նախ՝ ազատագրվել տգիտությունից կրթության և լուսավորության միջոցով, որն էլ հող կնախապատրաստեր զինված պայքարի միջոցով քաղաքական ազատության հասնելու համար:

Առաջարկվող ազատագրական ծրագրերը կյանքի չկոչվեցին, սակայն կարևոր նշանակություն ունեցան: Դրանք Հայաստանի ազատագրության

գաղափարը կենդանի պահեցին մինչև 19-րդ դար, երբ նման գաղափարները ձեռք բերեցին ավելի լայն քաղաքական նշանակություն: